

ԽՐԱՏ ԲՈՒՈՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Քրիստոսի՝ ամենագոր մեր թագաւորին եւ բարեբար Փրկչին հաւատարիմ ծառաներ, գնուած եւ ազատուած Անոր փրկարար անբիծ ու անարատ արիւնով: Աստուծոյ Միածին Որդիին ժառանգակիցներ եւ երկինքի արքայութեան ժառանգորդներ: Ճշմարիտ եւ քաջ Հովիւին հետեւող բանաւոր հօտեր, որ կը սնանիք Անոր անմահարար աւետարանական քաղցր վարդապետութեան արօտին մէջ եւ կենդանարար մարմինին ու արեան հաղորդութեամբ: Հայաստանեայց ազգ եւ ժողովուրդ՝ մեր սուրբ Լուսաւորչին եւ առաքելանման Հօր նահատակութեան եւ չարչարանքներուն պտուղները եւ ծնունդները: Արիական հսկող հովիւին նուիրական աղօթքներով հաւատքի մէջ հաստատուած եւ անոր աստուածաբուխ վարդապետութեամբ նշմարիտ եւ հաւատքի ուղիղ դաւանութեամբ պարսպուածներ ու պահաւաններ: Եկեղեցւոյ ամբողջական լրումը եղող, Աստուծոյ ու մարդոց միջեւ հաւատարիմ միջնորդ՝ մեղքերը քաղցր քահանաներ եւ քրիստոսաւեր ժողովուրդ: Կ'աղաչեմ ձեզի եւ այս սակաւ խօսքերով ձեր հետ կը խօսիմ ու հոգիիս կսկծայի ցաւերը կը պատմեմ, որովհետեւ շատ կը վախճամ ու կը գարհուրիմ Աստուծոյ ահեղ դատաստանէն, յաւիտենական Մեծ Օրուան անխար ու անկաշառ ատեանէն եւ երկնի ու երկրի ամենատես, արդար Դատաւորին բնութեանէն:

Արդարեւ, բազմաթիւ քանակներ պարտական եմ Տիրոջս՝ ամենաուստ պարգեւատուին ու բարեբարին...  
Շարունակելի

ԾՈՒԽ ԵՒ ԾԽԱՏԵՐ

Մեզի համար ծանօթ այս բառը, եկեղեցական շրջագիծէն ներս տարբեր իմաստ եւ նշանակութիւն ունի: Համաձայն Մալխասեան բառարանին, ծուխ բառը այլ իմաստ մը եւս ունի: Կը նշանակէ տուն, յարկ, ընտանիք, որ ունի իր օճախը: Այս հասկացողութեամբ, եկեղեցական բառագիտութեան մէջ ծուխ կը նշանակէ ընտանիք: Ան այդ իսկ, մենք կրնանք ըսել, (այսինչ) եկեղեցւոյ ծուխերը որոշեցին նոր եկեղեցի մը շինել: Վերոյիշեալ օրինակին հետեւողութեամբ, եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ալ կը կոչուի ծխատէր քահանայ եւ համանուն եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործող կրթական կառոյցը՝ ծխական դպրոց: Միջին Արեւելի հայահոծ գաղութներուն մէջ, ուր ազգային-եկեղեցական կազմակերպեալ կեանքը խարխուլուած է Ազգ. Սահմանադրութեան վրայ, անդամական դրութիւն գոյութիւն չունի, այլ՝ իւրաքանչիւր հայ ընտանիք ինքնին ծուխն է որոշեալ եկեղեցւոյ մը եւ ունի իր ծխատէր քահանան: Ծխային դրութիւնը ազգային առաջնորդարանի կողմէ կը սահմանուի: Այսօր հրատապ հարց է, կեանքի ներկայ իրադարձութիւններուն մէջ, երբ աղանդաւորական շարժումներ կը փորձեն թափանցել հայ կեանքէն ներս եւ հաւատքի նոր վարդապետութիւններով նոր քամբաներ կը փորձեն բանալ մեր ժողովուրդին դիմաց, եկեղեցին եւ հոգեւոր հովիւները չալուրջ կերպով պէտք է հաւատացեալներու ծուխը իրենց հոգատարութեան ներքեւ պահեն, որպէսզի անոնք զերծ մնան արտաքին թափանցումներէ եւ անբախտելիօրէն կապուած՝ իրենց Մայրենի եկեղեցւոյ:



ՔՈՒ ԽՕՒԵՂ ԽՄ ՈՅԶԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 49

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 36.22-37.11: Ա. Թս. 4. 1-11: Ղկ. 13.1-9

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 13.1-9

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ գոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելւովամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թգենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թգենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է, որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ: Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցի կը դնեմ: Այս ձեռով թերեւս պտուղ տայ, ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԳԻԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քու ճամբաներէդ քալենք եւ քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դո՛ւն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտենաւ յաւիտենից: Ամեն:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### Ս. ԹԱԴԷՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՍԷՆՈՍ ԱՌԱՋԵԱԼՆԵՐՈՒ ՏՕՆ

Ամեն տարի Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն տօնը: Անոնք Հայաստանի մէջ Քրիստոնէութեան փարոզութիւնը սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս Քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, տրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը բազմաստուածեան կրօն ունէր:

#### Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱԴԷՈՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն է: Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր փարոզական առաքելութեան ցամաքուն վրայ շուրջ 46 թուականին:

Թադէոս առաքել կը յաջողի փրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արքունական պալատէն ներս փրիստոնեայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ թագաւորին աղջիկն էր: Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել փորձերու պաշտամունքին եւ ձախողելով սպաննել կու տայ, թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թադէոս առաքելը: Մինչ այդ Արտագաւտի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թադէոսի փարոզութեան, անոր յիշատակին կը հիմնէ Թադէի վանքը շուրջ 66 թուականին, որ դարերու ընթացքին կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոններէն մէկը:

#### Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՍԷՆՈՍ

Բարթողիմէոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Անոր կը տրուի նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան փրիստոնէութիւնը փարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արարիոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուականին տեղի ունեցած է իր նահատակութիւնը:

Բարթողիմէոս կը նկատուի Ս. Թադէոս առաքելին հետ Հայաստանի մէջ փրիստոնէութեան առաջին փարոզիչը:

Առաքելը Հայաստանի մէջ իր փարոզական աշխատանքը սկսած է Գողթան գաւառէն, ապա Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ: Ան կը յաջողի, նաեւ հայոց արքունի շրջանակներէն ներս ալ փարոզութիւն կատարել: Քրիստոնեայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին ֆոյրը՝ Ոգուհին եւ հազարապետ Տերենտիոսը: Հետեւանք այն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ ֆոյրը, թէ՛ հազարապետը, թէ՛ առաքելը:

Հայ ժողովուրդը ի յիշատակ Ս. Բարթողիմէոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ կը շինէ վանք մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաբար մը վրան արձանագրուած, թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէոս Առաքելը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է:

Շնորհիւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն Հայաստանեայց մայր եկեղեցին **ԱՌԱՔԵԼԱԿԱՆ** կը կոչուի, Յիսուսի առաքելներու նախածնունդեամբ հիմնուած ըլլալուն համար:

## Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

### ՉԿԱՅ ՈՐԻՇ ԳՈՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԼՆ

«Ով, որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի» (Յե. 10.9): Քրիստոս իր այս հաստատումով, ըսել չ'ուզէր, թէ ինք պարզապէս մէկն է, որ մարդիկը փրկութեան կը տանի: Իր ըսել ուզածը այն է, որ ինք մէկ է միակ ճամբան է փրկութեան: Ոչ ոք կրնայ փրկութիւն ձեռք ձգել առանց իրեն: Մտնող անձը, անձը ուրկէ կը մտնենք եւ անձը, ուր կը մտնենք՝ Յիսուս ինքն է:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Երբեմն մարդիկ հարց կու տան մեզի, թէ հեթանոսները պիտի փրկուի՞ն: Ես պիտի չպատասխանեմ այս հարցումին, այլ՝ պարզապէս պիտի յիշեցնեմ ձեզի Պօղոս առաքելին խօսքը. «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատայ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս» (Գրծ. 16.31): Այլուր առաքելը կը հաստատէ, թէ կրնանք արդարանալ «միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով» (Գղ. 2.16): Այս է նման համարներ ցոյց կու տան, որ Յիսուս փրկութեան առաջնորդող դռներէն մէկը չէ, այլ՝ մէկ է միակ դուռն է: Չկայ ուրիշ դուռ, որովհետեւ չկայ ուրիշ մէկը, որ խաչուեցաւ մեր փրկութեան համար:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

### ԵԹԷ Կ'ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ, ԹԷ ԿԱՏՈՒԾՈՅ Կ'ՊԿՐԻՆՈՂԸ Ի՛ՆՉ ՊԿՇՏՊԿՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՏՆԷ, Կարդա՛ր ՍԱԳՄՈՍ 46

Աստուած է մեր ապաւենն ու գործիւնը, նեղութեանց մէջ շուտով հասնող օգնականը: Հետեւաբար մենք չենք վախճար նոյնիսկ, եթէ աշխարհը սարսի, եւ լեռները իյնան ծովերուն խորիւր: Նոյնիսկ, եթէ ալիքները շառաչեն ու փրփրին, եւ լեռները դողան անոնց կատարողութեանէն:

Գետ մը կայ, որ իր վտակներով կ'ուրախացնէ Աստուծոյ փառքը, բարձեալին սուրբ բնակարանը: Աստուած ինք այդ փառքին մէջ է, ուստի անիկա անասան է, որովհետեւ Աստուած կ'օգնէ անոր՝ ամէն օր: Ինչքան ալ ազգեր խռովի մատուցին, թագաւորութիւնները սասանին, բայց երբ Աստուած որոտայ՝ աշխարհն ամբողջ կը հալի:

Ամենակալ Տէրը մեզի հետ է, մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: Եկե՛ք, տեսե՛ք Տիրոջ գործերը, գարմանահրաշ գործերը, որ ան կ'ընէ երկրի վրայ: Աշխարհի չորս անկիւններուն՝ պատերազմները կը դադրեցնէ, աղեղները կը կտրէ, նիգակները կը փշրէ, եւ վահանները կրակով կ'այրէ: «Դադրեցուցե՛ք ձեր կռիւները եւ ճանչցե՛ք, թէ ե՛ս եմ Աստուածը, ե՛ս է որ կ'իշխեմ ազգերուն, ե՛ս կը տիրեմ աշխարհին»: Ամենակալ Տէր մեզի հետ է: Մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: